

50ա. Պօղոս Յօհաննիսեան (կամ Արեւական) + — Գործած է 1799 - 1819՝ Պօլիս, Քիւրքճի խան :


50բ. Պօղոս Արապեան Ապուլեիցի + — Միւսնայն անձը : Գործած է 1820 - 35՝ Օրբաքոյ, մինչ Պօլիս՝ Քիւրքճի խանի մէջ ալ տպարան ունէր զաւերներուն հետ :

51ա. Տայրն + Կրից Արդւոյ Պօղոսի Արապեան + — Յետ մահու իրենց հօր, գործած են 1836 - 53՝ Օրբաքոյ :

51բ. Արապեան Կոչարք + — Օրբաքոյի Պօլիս փոխադրուելով, գործած են 1855 ին՝ Կեօիկի Մուսաբաւ Բաշա խան :

52. Յարութիւն Խ. Խաչիկ Արապեան + — Վերջին շատաւոյք, Ապուլեիցի Պօղոսի բռնները որոնք իրենց պապուն հիմնած Օրբաքոյի գրաձուլարանը միայն բանեցուցած են քիչ մը ատեն :

* * Պօղոս Յօհաննիսեանի պապուն, հայրիկին և իր ճիւղատրեայ զերդաստանին կատարած տպարանական գործունեութեանը մասին խօսեցանք բաւական 32, 44 և 47 բաժնամասերով : Դանք հիմայ իրեն, իր զաւակներուն և բռններուն : — ՅՈՂՈՍ ԱՐԱՊԵԱՆԻ մականունն ԱՐԱՊԵԱՆԻ վերածուած ըլլալը կ'ստուգուի 1807 ին տպուած «Նարեկ»-ով, որուն ձակատը կայ ի **սպարանի Յօհաննիսեան Պօղոսի**, իսկ Յիշատակարանին մէջ՝ **Տպագրիչ Տիւրքու Պօղոս Արեւական** : — Պ. Արապեան 1820 ին երբ Օրբաքոյ փոխադրուեցաւ, Պօլիս ալ տպարան ունէր միաժամանակ : Այս պարագան կը հաստատեն 1822 ին տպուած «Նարեկ»-ը, նաեւ 1823 ի «Աւետարան»ն ու «Գործք առաքելոց»-ը. ի **սպարանի Արապեան Պօ-**



ՊՈՂՈՍ ԱՐԱՊԵԱՆԻ ՅՈՐԻՆԱԾ ԶԱՐԴԱԳԻՐԵՐԸ
տպուած 1802ի «Նարեկ»ի գլխոց սկզբնաստեղծ

ղոսի Ապուլեիցեայ, և երից որդեց իմաց՝ Աստուածատու, Դեղագայ և Գալուսի, որ ի Քիւրքճի խանն և կամ ի Միշագիւղն : — Պօղոսի մահէն վերջ երից որդեց տպարանական անունը քեւ չարունակուած է, բայց զաւակները հանգուցեայ հօրերուն անունն ալ ուզած են անմուտց պահել երբեմն, ինչպէս կը տեսնենք 1847 ին տպուած «Նարեկ»-ին ձակատը : — Դարձեալ, Պ. Արապեանի՝ Մհո. Աժատուրի բռնն ու Յօհաննիսի զաւակն ըլլալը կ'սպառնայ 1799 ին տպուած «Ճաշոց»-ով. Կ. Պօլիս, Քիւրքճի խան, ի **սպարանի Մհո. Աժատուրեան տիւրքու Յօհաննիսի որդեց Արապեան տիւրքու Պօղոսի** :